

**ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017-2018 ուս. տարվա
գիտական խորհրդի ընդլայնված նիստի**

ք.Երևան

23 նոյեմբերի 2017թ.

Օրակարգում՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Ս. Սադյանի տարեկան հաշվետվությունը:

Նիստին ներկա էր՝ Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր, ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս Գ. Գևորգյանը:

Նիստը նախագահելու համար առաջարկվեց Կենսաբժշկագիտության ամբիոնի
վարիչ, բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանի, իսկ որպես քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայանի
թեկնածությունները:

Լսեցին՝ Նիստի նախագահը ձայնը տվեց Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի
պաշտոնակատար Աշոտ Սերոբի Սադյանին, ով ներկայացրեց հաշվետվությունը
(հաշվետվությունը կցվում է) և պատասխանեց հարցերին:

Ելույթ ունեցան՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ֆարմաբիոտեխնոլոգիայի և
ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ.
Ա. Հովհաննիսյանը, բ.գ.դ. Է. Սեկոյանը, փոխտնօրեն, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը,
ուսանողական խորհրդի նախագահի ժ/պ Անուշ Ոսկանյանը, ովքեր իրենց
երախտիքի խոսքն ուղղեցին ակադեմիկոս Ա. Սադյանին: Ելույթ ունեցողները
հատկապես կարևորեցին այն հանգամանքը, որ տնօրենի պաշտոնակատար
Ա. Սադյանը ջանք ու եռանդ չի խնայում Ֆարմացիայի ինստիտուտի կայացման
համար: Նա իր անձնական օրինակով ոգևորում և մասնագիտական
առաջխաղացման է մղում և՛ դասախոսական կազմին և՛ ուսանողությանը:
Պրոֆեսոր Է. Սեկոյանը նշեց, որ ինստիտուտում տեղի ունեցող դրական
փոփոխությունները տնօրենության ճիշտ կազմակերպված աշխատանքի արդյունք
են: Անուշ Ոսկանյանը հավելեց նաև, որ նորագույն սարքավորումներով հագեցած

լաբորատորիաներում ուսանողները հնարավորություն ունեն ուսումնառության ընթացքում ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել նաև փորձնականում: Ելույթ ունեցողները առաջարկեցին բավարար գնահատել ինստիտուտի և, մասնավորապես, Ա. Սադյանի գործունեությունը:

Ելույթ ունեցավ նաև ԵՊՀ պրոռեկտոր Գ. Գևորգյանը, ով իր գոհունակությունը հայտնեց Ա.Ս. Սադյանին՝ մանրամասն և հետաքրքիր զեկուցման համար: Պրոռեկտոր Գ. Գևորգյանը, շեշտեց, որ հաճելի է գտնվել երիտասարդ կադրերով համալրված կոլեկտիվում, որն ունի բանիմաց գիտական ղեկավար, ով մշտապես նպաստում է նրանց առաջնթացին: Գ. Գևորգյանը նշեց, որ ինչպես պարզ դարձավ հաշվետվությունից, 2016-2017 ուս. տարում պլանավորված բոլոր աշխատանքները կատարվել են բարձր մակարդակով, ինչը հնարավոր է եղել ղեկավարության ուշադիր և հետևողական աշխատանքի շնորհիվ: Նա հավելեց նաև, որ Ֆարմացիայի ինստիտուտը բավականին լուրջ քայլեր է կատարել միջազգային կապեր ձեռք բերելու ուղղությամբ, ինչի մասին վկայում են միջազգային գիտաժողովներին ակտիվ մասնակցությունը և արտասահմանյան գիտնականների ընդունելությունը: Ամփոփելով ելույթները՝ պրոռեկտոր Գ. Գևորգյանն առաջարկեց բավարար գնահատել տնօրենի պաշտոնակատար Ա. Սադյանի կատարած աշխատանքը:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սադյանի հաշվետվությունը և այն գնահատել բավարար:

Նիստի նախագահ՝

Կենսաբժշկագիտության ամբիոնի
վարիչ, Բ.Գ.Պ

Ռ.Ա. Հովհաննեսյան

Գիտական քարտուղար, ք.գ.թ.՝

Ա. Ս. Դադայան